



ԳԵՈԹԻՄ



LYDIAN INTERNATIONAL

ԳԵՈԹԻՄ ՓԲԸ Ամսաթերթ, օգոստոս-սեպտեմբեր 2014, էջ 1

**Չրանոց Գնդեվազում՝ տնտեսական աճի և զարգացման համար**

Վայոց Ձորի Գնդեվազ համայնքը բազմիցս դիմել էր Գեոթիմ ընկերությանը՝ չրանոց հիմնելու խնդրանքով: Եվ ահա, այս տարվա մայիսին Ընկերությունը, գյուղապետարանի և "Ագրոսերվիսի" (CARD) հետ համագործակցությամբ, սկսեց **Չրանոց Գնդեվազում՝ Տնտեսական Աճի և Զարգացման Համար** Ծրագիրը: Այս նախաձեռնության կարգախոսն է օժանդակել համայնքին՝ լավագույնս օգտագործելով եղած գյուղատնտեսական բերքը: Ծրագրի գաղափարն է

այլընտրանքային և կայուն աղբյուր՝ չրի արտադրություն, նպաստելու գյուղում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, որի արդյունքները շոշափելի կլինեն ծրագրի ավարտից հետո երկար տարիներ: Նախ՝ վերանորոգվեց տարածքը, որը գյուղապետարանը տրամադրեց Ծրագրին: Այնուհետև իրականացվեցին մի շարք դասընթացներ՝ կոոպերատիվ հիմնելու, ֆերմերներին չրագործության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ:



Հիմնվել է "Գնդեվազ" կոոպերատիվը՝ համայնքի 25 ֆերմերներով, ֆինանսական աջակցություն տրամադրվել այս նորաստեղծ կառույցին: Չրանոցին տրամադրվել են երկու չորանոց, փաթեթավորման սարք, լվացարաններ, արկղեր:

**"Գոհ ենք ծրագրից, այն հնարավորություն է տալիս կանանց վերագնահատել իրենց դերը համայնքի կյանքում, ունենալ զբաղվածություն և մասնակցել ընտանիքի բարեկեցությանը"**

Զարուհի Մնացականյան, կոոպերատիվի անդամ

**Նորարաց չրանոցը մեկնարկեց իր աշխատանքները**

Իսկ ամռանը կազմակերպվեց չրի առաջին, փորձնական արտադրությունը. 600 կգ ծիրան չորացվեց:

Կոոպերատիվի տնօրեն Արտակ Եղոյանը հավաստեց. "այս տարի շատերն իրենց ծիրանը վաճառեցին՝ Հայաստանում ծիրանի սղության պատճառով: Հաջորդ տարի նախատեսում ենք մեծածավալ աշխատանքներ՝ ամենատարբեր մրգերի չրի արտադրությամբ»:



Սկզբում շատերը թերահավատ էին. սակայն կոոպերատիվի հիմնումը և առաջին արտադրությունը նրանց ոգևորեց, ինչի արդյունքում նրանք անդամագրվեցին կոոպերատիվին:

Ինչ խոսք, անելիքներ շատ կան. սա Գեոթիմ Ընկերության կողմից 20 միլիոն դրամի ներդրում է, հուսալի սկիզբ մի նախաձեռնության, որն այժմ պետք է պահպանվի և շարունակվի գնդեվազցիների կողմից: Բիզնեսի, տնտեսական աճի և նոր հմտություններ սովորելու հնարավորություն, որի կարիքն այսօր ունեն գյուղական շատ համայնքներ:



**ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ**

- Չրանոց Գնդեվազում** 1
- Գիդիյե Ֆոլենի հարցազրույցը** 2



«Ամուլսարը Վայոց ձորի և Սյունիքի սահմանին ոսկու հանքավայր է, Ջերմուկից մոտ 12 կմ հեռավորության վրա: Ոսկու կորզման մեթոդը կույտային տարրավազումն է, որը առաջին անգամ է կիրառվելու Հայաստանում: Մա գոյություն ունեցող մեթոդներից ամենաապահովն ու լավագույնն է բնապահպանական տեսակետից: Կույտային տարրավազման առավելությունն այն է, որ այն լրիվ փակ ցիկլով աշխատող համակարգ է, ջրի և սիստեմից որևէ հոսքի առումով և այն չի առաջացնում պոչամբար: Շահագործման ավարտից հետո կույտային տարրավազման հարթակը լիովին ռեկուլտիվացվում է: Մենք այսօր արդեն պլանավորում ենք ունենալ անտառապատման ծրագիր, որը կիրականացվի հանքի ենթակառուցների տեսանելիությունը նվազեցնելու նպատակով:

Բազմաթիվ այլ երկրներում՝ Կանադա, ԱՄՆ, Ռուսաստան, Ավստրալիա, Չիլի, Չինաստան, հանքեր են շահագործվել միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ առանց վնասելու շրջակա միջավայրը: Մենք հանքերը պատասխանատու կերպով ենք շահագործում՝ թափանցիկ աշխատելով, վերահսկելով բնապահպանական և սոցիալական ազդեցությունը: Լուրջ ենք վերաբերվում մեր աշխատողների և հանրության առողջության և անվտանգության խնդիրներին: Ֆոլենը պատմեց նաև իրենց կողմից կատարվող և առաջիկայում նախատեսվող ներդրումների մասին՝ ուշադրության հրավիրելով այն փաստի վրա, որ իրենք այսօր խոշորա-



գույն ներդրողներից են Հայաստանում. «Մենք ծրագրում ենք ներդնել մոտ 320 մլն դոլար, գումարած 60 միլիոն տեխնիկայի մեջ: Ընդհանուր առմամբ՝ նախնական ներդրումը կկազմի մոտ 380 մլն դոլար: Հանքի շահագործման 11 տարվա ընթացքում նախատեսում ենք մոտ 950 մլն դոլարի գործառնական ծախսեր: Նախատեսվում է շինարարության ընթացքում ունենալ մոտ 1500 աշխատատեղ և շահագործման ընթացքում 780 մշտական աշխատատեղ: Հարկերը կկազմեն տարեկան մի քանի տասնյակ միլիոն դոլար, ծրագիրը զգալի ազդեցություն կունենա նաև տեղական համայնքներում»:

Այդուհանդերձ, չնայած այս ամենը բացատրվում է, բնապահպան կազմակերպությունների բողոքը չի նվազում, նրանք ընդգծված բացասական վերաբերմունք ունեն հանքարդյունաբերության նկատմամբ ընդհանրապես, իսկ Ամուլսարի հանքի շահագործման նկատմամբ՝ մասնավորապես:

«Դա լիովին հասկանալի է, -ասում է Ֆոլենը, - խորհրդային տարիներից մնացած հանքերի դառը սպավորությունն է թերևս պատճառը: Կարծում եմ, որ Հայաստանի համար հանքարդյունաբերության վերաբերյալ պատկերացումները փոխելու ճիշտ ժամանակն է»:

Ի դեպ, վերջերս մի քանի ՀԿ-ներ բողոք էին ներկայացրել ընկերության դեմ, նաև Գնդեվազի բնակիչների շրջանում է սկսվել ստո-

րագրահավաք հանքի շահագործումը դադարեցնելու նպատակով: «Այո, բողոքում են և չեն ուզում ընկերության հետ երկխոսության մեջ մտնել: Մենք առաջարկել ենք միջնորդավորված երկխոսություն, որին առայժմ դրական արձագանք չենք ստացել: Մենք բաց ենք և թափանցիկ, պատրաստ կառուցողական երկխոսության փաստերի շուրջ և կարծում ենք, դա առաջ շարժվելու միակ միջոցն է»:

- Ինչպե՞ս եք գնահատում ձեր ներդրումային ծրագրի հեռանկարները՝ հաշվի առնելով մետաղի գների տատանումները: "Ոսկու գինը ըստ իս աճելու հնարավորություն ունի: Ինչ վերաբերվում է ծրագրին, ընկերությունը աշխատում է միջազգային լավագույն փորձին համապատասխան, այն պատասխանատու է, ուստի ծրագրի հենց սկզբից սոցիալական և բնապահպանական խնդիրները ներառում է ծրագրի նախագծման մեջ՝ սկսած շինարարության փուլից, մինչև շահագործումն ու հանքի փակումը: Մրանք այն կարևոր գործողություններն են, որոնք հնարավորություն են տալիս պաշտպանելու թե բնական միջավայրը, թե համայնքների շահերը և Ամուլսարում մենք հենց այդպես ենք աշխատելու:

Որպես օրինակ՝ մենք արդեն իսկ իրականացնում ենք որոնողահետախուզական շրջանում օգտագործված հողերի վերականգնում: Այս ամիս կավարտենք Միջազգային բնապահպանական և սոցիալական ազդեցության մանրակրկիտ գնահատումը, ներառյալ կառավարման պլաններ որոնց հետևելու ենք հանքի կառուցման և շահագործման ընթացքում: Միջազգային փորձագետների հետ պատրաստել ենք հանքի փակման մանրամասն ծրագիր, որը շահագործումից հետո հանքը պատշաճ կերպով փակելու մեր պատրաստակամությունն է, ներառյալ ընթացիկ և վերջնական վերականգնումը»:

**Ձեզ ենք ներկայացնում «Ռադիոլուրի» հարցազրույցը «Լիդիան ինթերնեյշնլ» ընկերության գործադիր փոխնախագահ Գիդիյե Ֆոլենի հետ**